

Սմբատ Բիւրատ
Եւրոպայի «Փիւնիկ», Ի
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՄԱՍՏՍԱՆ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ՓԻՒՆԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Ե
Ձեռագիր եւ չ'դարձուի

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով:

Կը ծախուի ՄԷԿ դրուէ ողջի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 21

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը դիմենք յանուն և ի պատիւ հայ մամուլին ու կը խնդրենք որ վերջապէս հաճին վճարել իրենց բաժանորդագրին, որ, չնչին գումար մը, պիտի ապահովէ սակայն թերթիս շարունակութիւնը: Ա՛վ որ բարեկամ է թերթիս, թո՛ղ այս դիմումին վրայ փութացնէ յղկել իր պարտքը: Միայն խմբագրին կամ գրաշարին հիւանդութիւնը չէ՛ որ կը խանգարէ թերթին կանոնաւոր հրատարակութիւնը. ուրիշ հիւանդութիւն մը կայ, մե՛ծ հիւանդութիւնը, որուն դարմանը կախում ունի բաժանորդներուն խղճմանը: Եւ՛ր ի՞նչպէս կրնանք հասկընել նիւթական տաքնապնիս:

ՀԱՅԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՉ

Էջ Ահրամի երեւելի եգիպտահայուն ազտոտ յօդուածովը դեռ զբաղել ժամավաճառ ըլլալ կը նշանակէ:

ամեն ողջամիտ հայ, — նոյնիսկ բնիկներն ալ — որոնք, ըստ էլ Ահրամի, երջանկ սյիշատակ Մուհամմէտ Ալի Խըտիվին օրերէն ի վեր հաստատուած են հոս — մեղի համամիտ են անշուշտ, երբ յայտարարենք թէ՛ յիշեալ յօդուածագրին — եթէ նոյնինքն էլ Ահրամի խմբագիրը չէ այն — միակ դիտաւորութիւնն է զաժ է երկպառակութիւն ցանկել բնիկ ու նորեկ հայ գաղթականներուն միջև, միևնոյն ատեն ջանալով մեր լուսամիտ կառավարութեան մատնացոյց ընել հայերս իբր խռովարար ու երկրին անդորրութիւնը խանգարող տարր մը:

Պատմութիւնը՝ կենդանի վկայ մըն է ազգերու կեանքին ու քաղաքական աշխարհի մէջ անոնց կատարած դերին: Դիմե՛նք ուրեմն պատմութեան, միակ հաւատարիմ աղբիւրին, հասկընալու համար՝ կեանքը, խաղացած դերերը Հայերուն՝ Եգիպտոսի մէջ, դարերու ընթացքում: Ուրիշ պատմաբաններէ զատ՝ Ապու Սալիհ հայ պատմիչը թողած է արարերէն ստուար ձեռագիր մը, 7 դար առաջ գրուած, որուն մէջ

յտակօրէն կը գծէ այն ատենուան քաղաքական ու առևտրական շարժումը հայ գաղթականութեան, որուն թիւը — միայն Ասիոյ ժողովուրդը — կը հաշուէ 30,000. կը թուէ հայ վանքերն ու եկեղեցիները, քանի՛ քանի՛ դիւղեր, թաղեր ու շուկաներ հայկական անուններով մկրտուած. կը յիշատակէ մէկէ աւելի հայ վեզիրներ — որոնցմէ էր Պէհրամ (Վահրամ) Շընորհալիին եղբայրը — որոնք երկար ատեններ երկիրը կառավարած են ամիրապետին անունովը. կը պատմէ մայրաքաղաքն ու շրջակայքը պատահած անկարգութիւններ որոնք զբուսուած են միայն քաղաքապահ հայ հեծելազօրքերէն, առաջիկա ինչ Արմեն, Էն, Էն: Ու այս բոլորը, Կիլիկիոյ Ռաբենեան հարստութեան շրջանին:

Սակայն, ի՞նչ հարկ կայ մտնել մանրամասնութեանց, հասկնալու համար թէ՛ Եգիպտոսի մէջ Հայերուն հաստատուելը չըսկսիր երջանկայիշատակ Մուհամմէտ Ալիի օրով և ո՛չ ալ հայ վեզիրութիւնը՝ Նուպարով. թէ՛ հայերուն մշտական դերն եղած է երկիրը շինել, վերանորոգել. թէ՛ առաջին Խոտիվին հայասիրութեան գաղտնիքը պէտք է փնտռել Հայերուն ձեռներէց ոգիին, կորովին, հաւատարմութեան, ինքնօգնութեան ու մանաւանդ, անոնց ստեղծագործ ու հնարագէտ հանճարին մէջ. թէ՛ հայերը Մէմլուքներուն տիրապետութեան տակ անգամ գիտցած են խաղաղօրէն ապրիլ, զարգանալ, և երկրին զարգացմանն ու բարգաւաճման ազդակներն ըլլալ. թէ՛ Հայերը առաջաւոր Ասիոյ կամ խաւարակուռ Ափրիկէի մէջ յայտնուած են միեւնոյն քաղաքակրթիչ ազգը, որ սուրէ ու կրթակէ անցած, արիւնի հեղեղներուն մէջէն գլուխը վեր բռնած, անընդհատ հարուածներու ներքև աննկուն ու հպարտ, շարունակած է իր ճամբան,

կրցած է կտակել սերնդէ սերունդ իր ժառանգութիւնը. — անցեալին պատկանանքը, ներկային աշխատանքն ու ապագային հաւատքը. թէ՛ հայը՝ միակ ազգն է, որուն անդամները միշտ ամենամեծ ծառայութիւնները մատուցած են իրմէ աւելի՝ օտար ազգերուն. օրինակի համար, Յարբուր-Երկրին նախ, որուն մեծագոյն յաղթանակները տարած ու կարեւոր գրաւումներն ըրած են հայ զօրապետները, թուով 300. Լեհաստանի, ուր, շնորհիւ իրենց բեղուն մտքին ու ազգեցութեան, հայախաղախ հիմնած ու ինքզինքնին կառավարած են իրենց ազգային օրէնքներով, իրենց յատուկ դատարանն ունեցած են, իրենց մէջէն 12 դատաւորներով որոնք վրչք կը կոչուէին. Պարսկաստանի, եւրոպական մայրաքաղաքաց մէջ՝ կարեւորագոյն դեսպանութիւնները վարելով ու իրանի աշխարհին քանի՛ քանի՛ նախարարներ ընծայելով. ապերախտ թուրքիոյ, Փաթիհի օրերէն մինչև այսօր, երկրորդ նախախնամութիւնն եղած են երկրին հարստութեան, տալով Պէզճեաններ, Տիւզեաններ, Աղաթօններ, Տատեաններ, Օտեաններ, Գազալեաններ, Տաուտներ, Չամիչներ, Նորատունկներ, Նուրեաններ, Փորդուգալներ, Երամեաններ, Էն. Եգիպտոսի, ուր դեռ կը գտնուին Եոլուսթ Պօղոս Պէյի ու Նուպարի արարածներէն բեկորներ, մինչև այսօր դատարաններու կամ ուրիշ կարեւոր վարչութեանէ մը մէջ ապրող: Ահա՛ Հայերն ու իրենց քաղաքական նշանակութիւնը:

Արդ, խռովարար մ'էր թէ բարերար մը Մեծ Վանեցին, վանեցիներուն փառքն ու պարծանքը, անմահն կարապետ Գալստեան, երբ եգիպտական հողին վրայ ոտք դնելէ ետք՝ փորձեց խառնուիլ ազգային գործերու. այն ատենուան այդ նորեկին ո՞վ սովորեցուց արդեօք պատկառելի կտակ մը թողուլ իր ազգին ապագայ սերուն-

դին գաստիարակութեանը գործին:

Ու այսօր, նոր գաղթականութիւն մը, բնականաբար հինէն շատ աւելի օժտումներով պատկառելի, երբ կը բազմայ իր հանրային ու կենսական շահերը յանձնուած տեսնել զօրաւոր ձեռքերու մէջ, որոնք գիտնան յարգել օրէնքը, ամենէ առաջ ու ամենէ աւելի, խռովարար, խառնակիչ ու շարկ'ըլլան անոր անդամները:

Բարեբաղդաբար, մեր բնիկ եղբայրները մենէ աւելի լաւ և աւելի մօտէն գիտեն կարևորութիւնը նորեկներուն, որոնք այսօր, հպարտ ենք նշանակելու, կը փայլին հրապարակին վրայ իրենց պարկեշտի համբաւովը:

Մէկ օրինակ միայն կը բաւէ. ահա՛ ոսկերիչները, որոնք Կ.Պոլսոյ մեծ շուկան փոխադրեցին Եգիպտոս. նախքան նորեկներուն հոս հաստատուելը, Կ. Պոլսէն, ո՛վ դիտէ ո՛րքան սուղ ու բարձր գիներով կարելի կ'ըլլար ձեռք ձգել դոհարեզէն ո՛ր և է զարգ մը. մինչդեռ վերջին գաղթականութեան հաստատուելէն առդին, Գահիրէ թէ Ադեքսանդրիա հայ ոսկերիչը կը փընտրուի, հայ մասներուն գործը շո՛ւղղիչ արմէն: Այդ ոսկերիչները, որոնք այսօր իրենց արուեստին նրբութեանն ու կատարելութեանը համբաւովը կը բազմապատկեն իրենց ցեղին պատիւը, միթէ խռովարարներ կ'ըլլան, երբ փորձեն իրենց եկեղեցիին, իրենց դպրոցին օգտին համար, իրենց ազգային ժողովներուն ընտրութեանը մասնակցել, ևն:

Բնիկ թէ նորեկ, մէկ արիւն, մէկ կրօն, մէկ լեզու ու մէկ պատմութիւն ունինք. մէկգի՛ թողունք բորբոս գազափարներն ու դձուձ կիրքերը, ու փորձինք մէկ նպատակի. այն է զարկ տալ մեր անտեսական, մտաւորական ու բարոյական զարգացմանը:

ԳԱՀԻՐԷԻ ՄԻԹԻՆԿԸ

Մեծարդայ Տնօրէն

«Փիւնիկ» ազգօգուտ հանդիսի

Նոյ. 16-ի կիրակի օրը տեղույս Եգիպտական Թատրոնին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաքում մը Երեսփոխանական ընտրութիւններու առիթով:

Բացումը կատարեց Պրն. Արտաւազդ Հանրմեան: Հետզհետէ խօսք առին պարոնայք Հրանդ Ալատին, Սուրէն Էթմէքճիեան և Շաւարշ Շիշմանեան որոնք ազգու շեշտերով պատարակեցին ժողովրդին անտարբերութիւնը և հրաւիրեցին դայն ձեռք առնել այն միջոցները որոնցմով կրնար իր ընտրողական իրաւունքներուն տիրանալ:

Ժողովը մէկ ձայնի բացառութիւնով ընդունեց հետևեալ որոշմանգիրը որուն օրինակը Ձեզ կը զրկենք հրատարակութեան համար.

ՈՐՈՇՄՆԱԳԻՐ

«Գահիրէի հայ հասարակութենէն մօտ 300 հոգի, Նոյ. 16-ի կիրակի օրը հաւաքուելով Շարա Ապտ-էլ-Ազիզի Եգիպտական Թատրոնին մէջ, միասին քննած են Գահիրէի Գաւառ Ազգ. ժողովի ընտրութիւններուն հարցը և, ընդունելով հանդերձ ազգային տուրքը, ցաւ կը յայտեն որ այդ տուրքի խնդիրը անմիջական կերպով կապուած է ընտրողական իրաւունքներու հետ, և գիտնալով այն անպատեհութիւնները և զեղծումները որ կրնան առաջ գալ եթէ թոյլ արուի որ 60 կամ 100 հոգի ընտրեն ազգ. վարչութիւն մը որ պիտի ներկայացնէ և պաշտպանէ 5-6000 հ. գինոց հայ գաղութի մը ընդհանուր շահերը. կասկածելով կարգ մը դաւերէ և ծուղակ

ներէ որ կրնան լարուել օգուելով
այս պատեհ առիթներէն,

Միաձայն կ'որոշէ վճարել ազգ-
տուրքը, ապագային թողլով բոլորքել
գանձումի այս կամայական միջոցնե-
րուն դէմ, որոնք միանգամայն կապ
ունին Սահմանադրութեան վերաբըն-
նութեան հարցին հետ:

ՄԱՆՍԻՍ.Զ

SԱՐԵԴԱՐԶ

Ամսաշա 1 ին էր Գ. Տարեդարձը մահ-
ուան ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆ որ իր կեանքին
ամենաբեղուն քջանին մէջ դադրեցաւ
սարժել է իր գրիչը, քաղաքակիրթ ա-
խարհին մամուլը ցնցող գրիչը:

Տարիները թո՛ղ սահին, տարեդարձ
թո՛ղ յաջորդէ տարեդարձի, միշտ թարմ
է ու թարմ պիտի մնայ հայ մեքին ու
յիշողութեան մէջ անունը, զոր շինեց
էւ գործը զոր թողոյց ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ:

Քանի՛ տառապի հայ ցեղը, քանի՛
ննեւ լուծը բռնակալին, քանի՛ շե-
տաւի պէտքը յեղափոխութեան, քանի՛
խախտ ժողովրդին հաւաստը հայրե-
նիքի ազատութեան վրայ, քանի՛ քանձ-
րանայ խաւարը դաւանան անզգայու-
թեան դէպ ի ցեղին ցաւերը. քանի՛
ներկայանան փորձիչ առիթներ, թոթ-
ուելու դարերու լուծը, այնքան աւելի
պիտի փնտռուի Տիգրան Երկաթի պէս
գործիչ մը, այնքան աւելի պիտի մեծ-
նայ ու տարածուի անունն անոր, որ
գրեց գիտակցորէն օտար լեզուով ու գործեց
օտար հողի վրայ, խօսեցաւ գրեց ու
գործեց լոկ իր հայրենիքին համար:

Անմահութի՛ւն իր յիշատակին...

ՔՐՈՆԻԿ

— ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՀԱ-
ՄԱՐ Եւրոպական դեսպանախորհուրդի

մը պէտք թիտղոսով կարևոր յօդուածը
Պ. Անատոլ Պօլիէօյի (Փիւնիկի նախորդ-
թիւին մէջ թարգմանորէն հրատարակ-
ուած), շղթղում առաջ բերած է
մանաւանդ Գերմանիոյ ու Արևելեան
Եւրոպային մէջ:

ԹԱՆ ընդունած է Ս. Բեթեո-
պուրկէն, 14 նոյ. թուականով, հե-
տեւալ հեռագիրը:

«Մակեդոնիոյ մէջ խառնակու-
թիւններ՝ Պուլղար կառավարութիւնը
չարունակ մտատանջ քրտած են ու ինք
որ յաջողեցաւ աւելան ասեմ վստահը
հեռացրնել, չը պիտի ուզէր նոյն կա-
ցութեանը կրկնուիլը առաջիկայ գար-
նան: Ու ամեն նիգ կը բափէ այս
հարցով շահագրգռել Տալու մեծ Տե-
րութիւններն ու հաւանական է թէ՛ ա-
նոնց պիտի առաջարկէ Դեսպանախոր-
հուրդ մը գումարել ձեռք առնելու հա-
մար միջոցներ որոնք բնոյթն ունենան
անդորրութիւնը պահպանելու Պալզան-
եան թերակղզիին մէջ:

Ս. Բեթրապուրկի Պուլղար դիա-
նագիտական գործակալը գնաց Եալդա
ուր պիտի խորհրդակցի Արս. Գործ. Նա-
խարար Կոմս Լամսուրճի հետ:»

— ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ՄԻՈՒԹԻՒՆԸ,
հակառակ իր հիմնադիրներուն այնքան
ազնիւ ու գովելի ջանքերուն, տակա-
ւին չունեցաւ իր Լսարան-Ընթերցա-
տունը, որուն բացուիլը կ'օգտասուի եր-
կար ատենէ ի վեր: Իրաւ է թէ դի-
րին չէ որ և է տեղ մը բանալ այդ-
պիտի ընթերցատուն մը, բայց խնդիրը
բանալուն վրայ չէ, այլ զայն յարա-
տեւութեան մէջ դնելուն, հետեւաբար,
պէտք է ընտրել կեդրոն տեղ մը, ուր
կարելի և դիւրին ըլլայ համախմբումը
հայերու. կեդրոն տեղն ալ քիչ մը
սուղ վարձք կ'ունենայ և քիչ մ'ալ
աւելի ծախք: Ահա՛ այս նիւթական
դժուարութիւններն են որոնց յաղթե-
լու համար բարի կամքերու և ձեռ-
ներէց միտքերու դազափարային եղ-

բայրակցութիւն մը, չըսելու համար զինւորագրութիւն մ'անհրաժեշտ է. քաղաքիս երիտասարդութեան համար ա՛լ պատուոյ խնդիր պէտք է դառնայ «Տիգրան Երկար» Միութեան գոյութիւնը, ոչ թէ անուանական այլ իրական: Իմացանք թէ Միութեան վարչութեանը կողմէն դրաւոր զիմուհներ եղած են քաղաքիս ունեւոր ազգայիններուն, Լսարան-Ընթերցարանը շուտով բանալու հարկաւոր դրամը հայթայթելու նպատակով: Տարակոյս չ'ունինք թէ մեր ամեն դասակարգի ազգայինները պիտի փութան իրենց նուէրները հասցընել Միութեան անուակին, որպէս զի չուշանայ բացումը յիշեալ Ընթերցատան, ուր ո՛չ միայն մեր տրամադրութեան տակ պիտի դրուին հայ և օտար շատ մը թերթեր, այլ և մասնաւոր դասարաններ, մեր երիտասարդութեան անուս և թերակիրթ անդամներուն մասաւորական պաշարը հարստացնելու համար ճիշդ դասաւանդութեամբ:

— ՏԻՍՐ ԲԱՍՔԱՆ ԲԻԻՄԻ, քաղաքիս առևտրական հրապարակին վրայ ծանօթ Բրիմի Տան երէց անդամը, վերջերս Ազն. Տիար Զարեհ Սվազլի ի ձեռքով Աղքատախնամ Ընկերութեան նուիրեց 10 Եգիպտ. ոսկի: Ահա՛ օրինակ մը բարեգործութեան և անկեղծ մարդասիրութեան, որ կուգայ ցնցել շատ մը քարացած սրտեր, որոնք կարծես ուխտած են անտարբեր աչքով մը դիտել ցեղին թշուառութիւնը, որ, աւա՛ղ, հետզհետէ կը բազմապատկի:

Ազնիւ նուիրատուն այն անձնաւորութիւնն է, որ մեր գաղթային հոսանքին, մէկէ աւելի անգամներ առատաձեռնօրէն մասնակցած է ի նպաստ գաղթականաց ձեռնարկուած հանգանակութեանց: Իսկ Տիար Զարեհ Սվազլը, որուն ձեռքով այդ նուէրը կը մտնէ Աղքատախնամին արկղը, միշտ գործի վրայ է: Հայ նուագախումբը վերա-

կազմելու և գայն աւելի զարգացընելու համար իր ջանքերը չը խնայեր: Ինչ ատենէն Աղքատախնամին ի նպաստ Զիզինեայի ներկայացման նախապատրաստութիւնները պիտի կատարուին, ա՛յն ատեն, բնականաբար, գեղեցիկ առիթը պիտի ներկայանայ գնահատելու Տիար Սվազլի ա՛յնքան անձնուէր ու օգտակար ծառայութիւնները, զորս չը դադարի մատուցանելէ բարդաւան պահելու համար տեղիս բարեգործական միակ կարևոր հաստատութիւնը, որ Աղքատախնամն է:

— Թարիզու Հայրենաց Միացեալ Ընկերութեան 1901-1902 տարեւոր ջանին Տեղեկագիրն ու Հաշուեցոյցը ստացանք, 14 էջերէ բաղկացած տետրակ մը, որուն սկիզբը դրուած է Վեհ. Հայրիկին օրհնութեան կոնգալը, տրուած 1901 Սեպտ. 13 ին: Ինչպէս որ կը տեսնուի Տեղեկագրէն, միանալէ առաջ՝ երկու բարեգործական ընկերութիւններ էին, մին Թարիզի, 1890էն, միւսը՝ Ասրլասականի, 1895էն ի վեր հաստատուած, երկուքն ալ համանպատակ: Միացումը տեղի ունեցաւ 1901 Սեպտ. 10ին, և նորը կոչուեցաւ Թարիզի Հայրենաց Բարեգործական Միացեալ Ընկերութիւն: Միացման թուականին, «Ատրպատականի» ընկերութեան դրամադուլին էր 25,041 զրան 75 կոպէկ, իսկ Թարիզիինը 47,265 զրան 35 կոպէկ, հետեւաբար Միացեալին դրամադուլին եղաւ 72,307 զրան 10 կոպէկ, չը հաշուելով երկու ընկերութեանց հաստատութեանց մէջ գտնուող զանազան կարասիքը, դասական պիտոյքներն ու ձեռագործի նիւթերը:

Միացման թուականին երկու ընկերութեանց հաստատութիւններն էին թիւով 13, որոնք անփոփոխ կը մնան այսօր: Պարսկաստանի հայաշատ կեդրոնն է Ատրպատականը, ուր 10 ուսումնարաններ կան, 12 ուսուցիչ և

ուսուցչութիւններով, որոնք կը կրթեն 368 երկսեռ աշակերտներ, 269 մանչ ու 99 աղջիկ:

Այդ ուսումնարանաց մէջ կ'աւանդուին. Հայերէն, Ազգ. Պատմութիւն, Կրօն, Իրազննութիւն, Հայրենագիտութիւն, Աշխարհագրութիւն, Թրււաբանութիւն, Գեղարդութիւն, Երգ, Մարմնամարզ և Ձեռագործ (Օրիորդաց):

Իսկ Թաւրիզու մէջ կան 2 Մանկական պարտէյ, երեք ուսուցչութիւններով, երկուքը կովկասէն: Լիլաւայի ու Վալայի այս երկու մանկապարտէզներուն մէջ կը կրթուին 71 երախաներ. Երկու Արհեստանոց, 1 ուսուցչութիւն և 1 օգնականով, որոնք 25 օրիորդներու կ'աւանդեն կար ու ձեւ. 1 Գրադարան-Ընթերցարան տիկնայց ու օրիորդաց համար, որ այսօր ունի 500 կտոր գիրք, զանազաններէ նուիրուած, նոյնպէս կը ստանայ շատ մը թերթեր ու հանդէսներ ամեն կողմերէ: Այս համալսարանի մասնաճիւղերն են. Գրքեր, Տեղեկագրին հետեւեալ յուզիչ տողերը.

«Այսօր Ասրպասականի 35-40 հազար Հայ գաւառացի ժողովուրդը Միացեալ ընկերութեան վարչութեան բերանով կոչ է անում այն բոլոր հայերին, որոնք միջոցներ ունեն եւ պարսականութիւններ են զգում իրենց միջոցներով օգտակար լինել իրանց ազգին, որ յիշեն իրանց այդ պարսականութիւնը, խղճան այս սասնեակ հազարաւոր ժողովրդի վիճակին եւ իրանց կարողութեան չափով օգնութեան ձեռք կարկառեն այն ընկերութեան, որը զբաղած է հայ գաւառների մանուկ սերնդի կրթութեան գործով:

Հանգամանքները յաջող են, բայց և նպաստաւոր: Շնորհիւ մեր պետութեան Ինքնակալ Արեգակնափայլ Շահրըշահ Միզէճեհերդիինի հայաստեւ եւ հայրա-

խնամ կառավարութեան, շնորհիւ Նորին Կայսերական Մեծութեան դէպի ժողովրդական կրթութիւնն ունեցած բուն ցանկութեան, որով հովանաւորում է պարսկահայ ժողովրդի կրթութեան գործը, ամեն դիւրութիւն ունին խաղաղ եւ անարգել կերպով զարգանալ եւ յառաջդիմելու ուսման եւ կրթութեան՝ ապա ուրեմն բարեկեցութեան եւ բարգաւաճման մէջ:

Պէտք է օգտել այս հանգամանքից, պէտք է օգտել մեծ չափով: Այս է պահանջում թէ՛ Պետութեան եւ թէ՛ Հայութեան շահը:

Միացեալ ընկերութեան վարչութիւնը սիրում է յուսալ, որ իւր կոչը չի պիտի մնայ ձայն բարբառոյ յանպատի, այլ նա արձագանք պիտի գտնի Հայութեան խաւերում, արձագանք պիտի գտնի ամեն մի ազնիւ արտի մէջ եւ այսպիսով ընկերութիւնը բաղդ պիտի ունենայ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն ստանալ շատ քան իր: Վարչութիւնն չափազանց շնորհակալ պիտի լինի իւր ազակիցներին. իսկ նոր սերունդն անհուն երասագիտութիւն պիտի գտայ դէպի իւր բարեբանները»:

Երեւելի (ո՛չ թէ ԸԼ Ահրամի տեսակէն) Եգիպտոսայց խորին ուշադրութեանը կը յանձնենք Թաւրիզի Հայուհեաց Միացեալ ընկերութեան ներկայ կոչը: Թո՛ղ իրենք ալ մասնակցին Հայութեան այդ կարեւոր հատուածին կրթութեանը նուիրական գործին, զոր այնքան ազնուօրէն առաջ կը տանի Թաւրիզի համեստափայլ Տիկնայց և Օրիորդաց Միացեալ ուժը. Թո՛ղ մեր Եգիպտոսայ տիկնայք օրինակ առնեն և իրենք ալ շահագործուին իրենց հայրենակիցներուն կենսական հարցովը:

— Պ. Արամ Աղայան, Մօճեհուսթի սրահին մէջ, Նոյ. 29 ի շարաթ իրիկունը գեղեցիկ նուագահանդէս մը

տուաւ, անճուէր աշակցութեամբ Տի-
կին Տ. Գալէնէսեր Մ. Բէշտիւալճեանի,
Օր. Ս. Գօնէ յիսկոյի և Պ Պ. Ս. Գօ-
նէ յիսկոյի, Ռ. Տի ճիօրճիօյի, Ի.
Շօնէրի, Ա. Գ. Օրսիի և Է. Գիօրէնան-
ճիի ամենքն ալ քաղաքիս ծանօթ ա-
րուեստագէտներ:

Թէ՛ պ. Ալպան և թէ՛ Տիգին Գա-
լէնտէր Բէշտիւալճեան մեր ազգային
հպարտութիւնը զգուեցին հոն իրենց
զեզեցիկ արուեստագիտութեամբ:

Նուագահանդէսին մանրամասն նը-
կարագրութիւնը յաջորդ թիւով:

Մեր անկեղծ խնդակցութիւն-
ները:

— Թրքահայ Կաղարկանները, ու-
րոնք նախապէս թրքական սահմանա-
զլուին անցնելու փորձ մ'ըրած էին,
Սարրգամբլի մօտ, ետ մղուած են դէպ
ի պարսկական սահմանագլուխը: Բայց
երբ Կոչլուանի մօտ հասան, ուս
զօրքերը պաշարեցին զիրենք և դէպ
ի Կարս դարձուցին: Շատերը չ'են ու-
զեր քաղաք մտնել ու բեռ կը մնան
Շիրակայ հայ գիւղացիներուն վրայ:
Թրքական սահմանագլուխը, ասոնցմէ
հինգը սպաննուեցան, ուրիշ հինգ հո-
գինք, որ սահմանագլուխն անցեր է-
ին, ձերբակալուեցան: Տասնհինգ ար-
զաք ու երկու չափահասներ հիւան-
դութենէ մեռան:

Այս տեղեկութիւնները սակայն,
Հոկտ. 26 թուականով գրուած են:

Կը հաւատուի հիմայ թէ՛ յիշեալ
գաղթականները Պարսկաստանի մէջ
պիտի հաստատուին:

1903

ՂԱՆԳԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Ուսումնաթերթը բոլորեց իւր վեշ-
տասաներորդ տարին ու կը մտնէ եօթ-
եւտասներորդը: Այս թէ՛ շրջանին աւ-
թիւ՝ բարեկամներէն թերթիս տարա-
ծումը կը խնդրուի, իսկ ազգայիննե-

րը կը հրաւիրենք բաժանորդագրու-
թեան:

«Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը
պիտի հրատարակուի կանոնաւոր, ա-
մէն ամսոյ սկիզբը. նոյն ծրագրով և
նոյն ուղղութեամբ, աւելի ճոխ ու
բազմակողմանի:

Ուսումնաթերթիս բովանդակու-
թիւնն էր և պիտի մնայ Հայութեան
կամ հայ-ազգին վերաբերեալ նիւթեր,
— ուսումնասիրութիւններ: Պիտի ծա-
նօթացրէ՛ այն ամեն ազգային և օտա-
րազգի (ի մասնաւորի գերմ.) գիտնա-
կան բանասէրներուն հմտալից ու հե-
տաքրքրական գրքերն ու գրութիւն-
ները, որ կը հային հայ-ուսման, հայ-
բանասիրութեան, հայ-գրականութեան,
հայ-լեզուին, հայագիտութեան, —
հայ-ազգին: Անաչառ քննադատու-
թեան պիտի ենթարկէ հայ-ազգին անց-
եալն ու ներկան—հայ-պատմութիւնը:
Պեղումներէ, ձեռագիրներէ և արձա-
նագրութիւններէ հանուած հայ-հնա-
գրութիւնն և հայ-հնախօսութիւնը
մեծ տեղ պիտի գրաւեն: Նոյն չափով
պիտի մշակուին հայ-մատենագրական
ու մատենախօսական և հայ-աշխարհա-
գրական ճիւղերը: Պիտի հրատարակէ
հայ-ականաւոր և գրագէտ անձնաւո-
րութեանց կենսագրութիւնները—կեն-
դանագիրներով: Պիտի ջանայ հայ-
գրքերու կամ կարեւոր նոր հրատարա-
կութեանց վրայ՝ (նոյն իսկ Թարգմա-
նածոյ) որ թերթիս իբր նուէր կ'առաք-
ուին, քննադատական համառօտ կամ
քնդարձակ տեղեկութիւն տալ: Երբեմն
երբեմն առանց խտրութեան թերթի և
թերթի հայ-մամլոյ կամ հատածներու
վրայ քննադատական տեսութիւններ
պիտի երևան են, են, են: Ինչպէս
թերթիս ներքինը՝ նմանապէս արտա-
քինն — ծածկ—ալ Հայ յուրիւն պիտի
բուրէ, հայ-յրագրաց ազգային նիւ-
թոց բովանդակութիւնը, գրական ծա-
նուցումներ, թղթակցութիւնք են:

Այն գրութիւնները կամ թարգմանութիւնները, որ ո՛րէ կերպով առնչութիւն չունին հայ-ազգին, հայ-աշխարհին և հայ-գրականութեան հետ չեն հրատարակուիր:

Տարեկան գինն է 10 ֆր. — 4 րր. կանխիկ:

Հասցէն՝ Rédaction de la Revue «HANDESS AMSORYA», Vienne (Autriche), VII 12 Mechitharistengasse 4.

Ա Ջ Գ Ե Ր

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին կարևոր մասերուն ամփոփումը, հայերէնի թարգմանում, գեղեցիկ հատոր մը, 157 էջերով, հեղինակին պատկերով ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տօնայեան: Գինն է 3 ֆրանգ:

Դիմել:

Mr. Donabedian
177 Godolphin Road
Shepherd's Bush

London, W.

ԳՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ

Կը ծանուցուի թէ քաղքիս մէջ նոր գործակալութիւն մը հաստատուած է, որ կը հայթայթէ հայ ու օտար լեզուներով զանազան գրքեր ու նոր հրատարակութիւններ, նաև տպագրական կշիշէ, Բշաֆ, պղնձէ ու Գառլուէ կնիքներ, ևն:

Դիմել Խմբագրութեանս կամ հետեւեալ հասցէին:

M. Apkarian & Co.
Alexandrie (Egypte)

ՍՐԱՔՍ

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ: ԽԻՍ ՉԱՓԱՎՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ՏՐ. ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեաց բժիշկ

Սեսուքիս փողոց թիւ 1

«Տար ս'Այեֆսսևսրի»ի սպարանիկն
վրայ ի. Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղքիս մէջ ու պարտաստ է դարձանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղեմով կը բուժէ մանաւանդ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ճրիաբար կը դարձանէ իրեն դիմող աղքատ հիւանդները:

Ա Ջ Գ

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պարտաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զսնացուցիչ եւ դիւրամտօջիլի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան: